Ադրբեջանի ԱԳ նախարարը բացառել է ՆԱՏՕ-ի միջամտությունը

ANS լրատվական գործակալության հաղորդման համաձայն, սեպտեմբերի 28-ին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերթսոնը պաշտոնական այցով կժամանի Ադրբեջան: Այս առնչությամբ Ադրբեջանի արտգործնախարար Գուլիեը հայտարարել է, որ բացառում է ՆԱՏՕ-ի միջամտությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին: «Մենք կողմ ենք հակամարտությունը կարգավորել ԵԱՀԿ շրջանակներում, քանի որ թե Հայաստանը, եւ թե Ադրբեջանը ԵԱՀԿ անդամ են, մինչդեռ ՆԱՏՕ-ի կառուցվածքի մասը չենք: Այս պատճառով ՆԱՏՕ-ի միջամտությունը հակամարտության կարգավորմանը բացառվում է»: Լրագրողի այն հարցին, թե արդյո՞ք Ադրբեջանը չի նախատեսում անդամակցել Հյուսիսատլանտյան դաշինքին, նա պատասխանել է. «Ես գտնում եմ, որ այս մասին խոսելը վաղ է: Մենք համագործակցում ենք ՆԱՏՕ-ի հետ, եւ կարծում եմ, նախ եւ առաջ պետք է ապացուցենք, որ կարող ենք պատշաճ կերպով համագործակցել այս հեղինակավոր կազմակերպության հետ»: